Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Գեղամ Վարդանյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Ք. Բուխարեստ (Ռումինիայի Հանրապետություն), 2019 թվականի փետրվարի 27-ից մարտի 1-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

  Ռումինիայի Հանրապետության կապի և տեղեկատվական հասարակության նախարություն

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

  Թվային համագործակցության գործում առաջընթաց ձեռքբերելու Հռչակագրի հաստատում և ԱլԳ տարածաշրջանի հարցերի քննարկում

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2019թ. փետրվարի 28-ին քաղաք Բուխարեստում (Ռումինիայի Հանրապետություն) տեղի է ունեցել Թվային տնտեսության վերաբերյալ Արևելյան գործընկերության նախարարական հանդիպումը, որն անցկացվել է Եվրոպական Միության Խորհրդում Ռումինիայի նախագահության ներքո՝ Եվրոպական Հանձնաժողովի համանախագահությամբ:

Եվրոպական Միության Խորհրդի Ռումինիայի նախագահությունը նախարարական հանդիպման շրջանակներում նախանշել են ԱլԳ Գագաթաժողովի կողմից հաստատված 2020 թ.-ի համար կատարվող աշխատանքները՝ միաժամանակ տոնելով նաև Արևելյան Գործընկերության տասնամյակը:

Թվային տնտեսության վերաբերյալ Արևելյան Գործընկերության նախարարական երրորդ նիստի նպատակը 2017 թ. ի վեր գրանցված առաջընթացի և ձեռքբերումների քննարկումն է, մասնավորապես՝ «EU4Digital» բրենդի ներքո առաջին ԵՄ

ֆինանսավորվող գործողության և ԱլԳ գործընկերների միջև տարածաշրջանային ռոումինգ համաձայնագրի ուղղությամբ ճանապարհային քարտեզի մեկնարկը, թվային տնտեսության հետ կապված գալիք տարիների պլանները, խոչնդոտները և հնարավորությունները:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Նախարարական հանդիպմանը հաստատվել է 2017թ. հոկտեմբերի 5-ի Տալլինի Նախարարական Հռչակագիրը, ըստ որի մասնակիցները հաստատել են իրենց ձգտումը խորացնել համագործակցությունը հետևյալ ոլորտներում՝

- Էլեկտրոնային հաղորդակցություններ և ենթակառուցվածքներ,
- Ապահովություն և անվտանգություն,
- Էլեկտրոնային առևտուր,
- Թվային հմտություններ,
- ՏՀՏ նորարարություն և ստարտափների էկոհամակարգեր,
- էլեկտրոնային առողջապահություն:

Նախարարական հանդիպման ընթացքում քննարկվել է Արևելյան Գործընկերության երկրներում թվային շուկաների ներդաշնակեցման հարցը, քանի որ դա ընդլայնում է Եվրոպական Միության Թվային միասնական շուկայական ռազմավարության օգտակարությունը մինչև 70 միլիոն սպառողների ԱլԳ տարածաշրջանում, հանգեցնում է տնտեսական աճի, ստեղծում է ավելի շատ աշխատատեղեր, բարելավում է մարդկանց կյանքի պայմանները և օժանդակում է գործարարությանը: Քննարկվել է նաև ԱլԳ տարածաշրջանում թվային տնտեսության խոչնդոտներն ու հնարավորությունները:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը հանդիպումներ է ունեցել ԱլԳ երկրների նախարարական պատվիրակության անդամների, մասնագիտացված ասոցիացիաների, Քաղաքացիական Հասարակություն Ֆորումի, EU4Digital նախագծի կոնսորցիումի, միջազգային ֆինանսական հաստատությունների, հետազոտական և ուսումնական ցանցերի ներկայացուցիչների, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի թվային շուկայի հարցերով նախագահ Անդրյուս Անսիպի, Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալ Լաշա Միկավայի, Բուլղարիայի տրանսպորտի, կապի և ՏՏ նախարար Ռոսսեն Ջելիազկովի, Լիտվիայի էկոնոմիկայի և նորարարության փոխնախարար Մարիուս Սկուոդիսի, Ռումինիայի կապի և ինֆորմացիոն հասարակության նախարար Ալեքսանդրու Պետրեսկուի,

Ռումինիայի կապի և ինֆորմացիոն հասարակության նախարարության քաղաքական ռազմավարության և միջազգային հարաբերությունների տնօրենների խորհրդի նախագահ Քրիստիան Իլյե, Մոլդովայի էկոնոմիկայի և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Վիտալի Թառլևի, Բելառուսի կապի և տեղեկատվության նախարար Շուլգան Կոնստանտինի, Չեխիայի արդյունաբերության և առևտրի նախարար Մարտջա Նովակովայի, Էստոնիայի Արտաքին գործերի նախարարության թվային հարցերի գծով դեսպան Նիրկ Թոնիսի և այլոց հետ, որոնց շրջանակներում քննարկվել են ապագա համագործակցության հեռանկարները:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
  տեխնոլոգիաների նախարարի տեղակալ՝

Գեղամ Վարդանյան